

Կը հրատարակուի Ամսոյն 10ին 20ին եւ վերջին:
Վեցամսեայ գինն է 60 դանեկան ԿԱՆԻՅԻ:
Ուզողը կրնայ ստորագրուիլ, Պօլիս Գրգլար աղասի խանը
վերի յարկը Թ. Խմբագրի սենեակը եւ Մերձաւոր Մար-
գարեան Արգոյ Յարուրիւն աղայի գրատունը:
Ստորագրուիւնը 1861 Յունուար 10ին կնքուի:

Առգի լրգանին ամբողջ 12 քիւր ուզողը 30 դանեկան պի-
տի վճարէ:
Անճնական լաւու մը համար ըլլալու ծանուցմանց հա-
մեմատաւար սակարկութիւն կըլլայ:
Ո եւ իցէ համակ եւ գրութիւնը Խմբագրին պիտի ուղ-
ղուի:

10 ՅՈՒՆՈՒԱՐ

ԵՐԿՐՈՐԴ

ՇՐՋԱՆ

ԹԻՒ 13

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Ահա ասիկ մեր նախընթաց խոստմանը հա-
մեմատ Արեւելեանիս Երկրորդ ՇՐՋԱՆը կրած
քանի մը թեթեւ փոփոխութիւններով կ'ընծա-
յեմք սիրելի Շնթերցողացն յոռասարկ որ ինչ
պէս անցեալին նոյնպէս ներկային զինք ընդու-
նող բարեմիտ անձանց կողմէն իւր համակրու-
թիւնը օտոացած, ու անով առ մեզ վերստին
խրախուսանք մը եղած՝ ալ այսուհետեւ յարանու-
եւ անընդհատ շարունակութեան մը պիտի կա-
րենամք հետեւիլ, միշտ Ա եցամսեայ շրջանով:

Արդ՝ եղած փոփոխանքը ինչպէս որ կերե-
ւի նախ՝ անոր հրատարակման Տասնօրեայ ըրած
եմք նոյն գիրքովը. որ ըսել է ամիսը երեք ան-
գամ փոխանակ երկու անգամի, որ էր առաջ.
որպէս զի ասով սիրելի Ազգիս եւ բարեմիտ Շն-
թերցողացս աւելի օգուտ մը ըրած ըլլամք:

Երկրորդ՝ առ հատարակ ընթերցողներուս
գիւրութիւն մը ըլլալու նպատակաւ անոր որչ-
պագրութեան գիրքը միօրինակ ձեռով ըրինք,
որ ինչպէս նախընթաց շրջանին մէջ երբեմն չորս
հինգ կերպ գիրքեր դառնուելով՝ ընթերցողացմէ
շատերուն դժգոհութեանը առիթ մը եղած էր,
մանաւանդ այն առիթովն որ առաջին գիրքերուն, եւ
իրաւամբ ալ էր, քանզի հասարակութիւնը դեռ
անոր ընթերցմանը չէն վարժած*:

* Այս աղաճրակալ գիր (իրենց լեզուաւ) ըսածնիս
քանի մը տարիէ ՚ի վեր փարիզ Ճ. Արամեանի Տը-
պարանէն ելած գեղեցիկ գիր մըն է, եւ առանց վար-
ժելու ընթերցումը դժար է: Այս պատճառաւ է որ
Մեծարդոյ Յանիկ աղա Արամեանը պատկերազարդ
Այբեհարան կամ Գասագիրք մը յօրինած է, որ Հայ
հասարակութիւնը վարժին նոյն գիրքերուն:

Երկրորդ՝ անշանց անոր էական նպատակէն
հեռանալու՝ որքան կարելի է ընթերցողաց ճա-
շակին համեմատ (բայց ՚ի քաղաքական լուրերէ)
ամեն կերպ նիւթեր պիտի պարունակուին անոր
մէջ, ինչպէս Ազգային կարեւոր լուրեր եւ Բա-
նադատութիւնը, այլ եւ այլ իրողութեանց վը-
րայ Յօդուածներ, եւ երբեմն (բայց հարկի) Ար-
թոնական ինքիւններ, որոնք Արեւելեանիս առա-
ջին եւ սրբազան պաշտօնն եղած էր մինչև ցարդ
եւ պիտի ըլլայ նաեւ յայսմ հետէ: Երկրորդապէս
պիտի ըլլան Բանասիրական տեղեկութիւններ,
Ազգին բարոյականին նպատակաւ կերպ Ա իպա-
սանութիւններ եւ սրտաշարժ Ողբերգութիւնք:
Մարդակազմութեան եւ Առողջաբանութեան
վրայ ծանօթութիւններ. եւ երբեմն Բանաստեղ-
ծական գեղեցիկ Ոտանաւորներ, երբեմն ալ զը-
ւարձալի Ատտակերգութիւններ: Ետեւմէ ՚ի
զատ եթէ հարկը պահանջէ, մերթմերթ խա-
ռըն լուրեր ալ պիտի ըլլան, այն կերպ լուրեր
որոնք կրնան Ազգին բարեոյն նպատակ:

Ահա այս անգամ մեր այս յանձնառու ե-
ղած ծանր պարտաւորութիւնները ատենին ան-
պատճառ ՚ի գործ դնելու համար՝ կարողու-
թիւննիս ներածին չափ ամեն ճիգ ու աշխա-
տանք չի խնայելով՝ պէտք եղած ժամանակ (բա-
րոյապէս ու նիւթապէս) երկու կերպ անձնա-
կան զոհեր ալ պիտի ըլլան վասն Ազգի սիրոյն:

Յիշաւի մեր անձնական անժամանակեայ եւ
յանկարծական գործերը շատ ատեն եղած է որ
այս ձեռնարկութեանս դէմ դժուարութիւն
ներ յարուցած է, եւ յայտ է թէ՛ պիտի եւս ա-

ուսուել պիտի յարուցանէ . ուստի ասոր ալ առաջըր առնելու համար՝ Արեւելեանիս խմբագրութեան ու անօրէնութեան իրաւունքը միշտ մեր անձին սեպհականելով՝ օգնական ընտրեցինք մեզի այն ազգածանօթ Յարգոյ Արմենակ Տ. Չիզմէճեան ուսումնական և եռանդուն ազգասէր Արիտասարդը, այն երիտասարդը որ սա դեռածաղիկ հասակին մէջ իւր ազգասիրական ջանքին ու գրաւոր աշխատութիւններովը Ազգին կողմէն բաւական համակրութիւն ստացած՝ իր Քրիստոնէական ծմաբիտ հաւատքին ու Առաւորչական անրիժ դաւանանքին վրայ ունեցած հաւատարմութեանը ու սիրոյն փոխարէն՝ Հայաստանեայց Առաքելական Արեւելեցոյ գլուխ այժմեան Ս. Եհափառ Ս. Աթուղիկոսէն երկու անգամ Հովուական կոնդակաւ պատուեալ ըլլալով՝ շատերուն և մանաւանդ մեզի չափազանց սիրելի եղած է : Ահա այս կերպ անձ մը մեր այս գործոյն օգնական որոշելով՝ յուսամք որ պիտի կարողանամք յաղթելով թէ վերցոյնեալ նիւթական և թէ ուրիշ այլ և այլ բարոյական դժուարութեանց :

Եւ արդ կը մնայ մեզ ըսելու թէ՛ քանի որ Արեւելեանը ներկայ Շրջանովը այս կերպ ընթացքի մը պիտի հետեւի, յայտ է թէ իւր ծախքն ալ բաւական պիտի աւելնայ, ուրեմն հարկ կրլայ որ անոր գնոյն վրայ յաւելուած մը ըլլուի . բայց և այնպէս՝ ըլլալու յաւելուածը ոչ թէ իւր առջի գինէն աւելի գին մը պահանջուելով՝ այլ նոյն գնոյն և թուոյն համեմատ՝ գին մը միայն որոշելով, այսինքն՝ ինչպէս որ անոր նախընթաց Ս. Եղամեսայ Շրջանին լրումը 12 թուով եղած 40 դահեկան գին որոշուած էր, նոյնպէս այս ներկայ Շրջանը վեցամսեայ՝ բայց լրումը 18 թուով ըլլալով՝ այժմ 20 դահեկան յաւելուած մը լինելն իւր արդաւաւելուն է . որով գոնէ 6 թուոյն տապաւրական ծախքը իր տեղը գտնէ, թողնելով ուրիշ նորանոր յաւելեալ ծախքերը : Ահա ասով ըսել կրլայ որ եղած յաւելուածը աւելորդ բան մը չէ՝ այլ նոր կարգադրութեանց համեմատ իրաւացի որոշմունք մը : Աստի յուսալի է թէ՛ ինչպէս որ Նիթերցողը առաջին անգամ Արեւելեանիս վեցամսեայ 12 թուոյն 40 դահեկան վճարելու պայմանաւ սիրով ընդունելութիւն մը ցրցուցած էին, այսպէս ալ այժմ նոյն Արեւելեանը այս կրած փոփոխութիւններովն ու վեցամսեայ 18 թուոյն 60 դահեկան որոշուած գնովը ամենայն յօժարութեամբ պի-

տի ընդունին :

Ի վերջոյ խօսքերնուս ըսելքնիս՝ սա է որ այս անգամ այս ձև ընթացքի մը հետեւնուս պատճառը ոչ այլ ինչ է, այլ միայնակ յուսալով կամ նկատելով որ՝ այս օրինակ ընթացքով մը թէ սիրելի Ազգերնուս արդի վեճակին բարելաւութեանը և թէ մեր բարեմիտ Նիթերցողաց մտաց լուսաւորութեանը աւելի օգուտ մը ըրած կ'ըլլամք . ըստ որում այս է մեր ամեն վայրկեան ի սրտէ իղձն ու փափաքը : Բայց չէ, մեր այս ընթացքն ալ օգուտ պիտի չընէ, և ընդհակառակն այս աշխատանքներնուս մէջ դարձեալ դէմերնիս բժական դրութիւններ պիտի ելնէ եղեր, թող ելնէ, ամենեւին չի պիտի դժկամակիւք, քանի որ նախ մեր նպատակը անկեղծաբար և անշահաբար միշտ Ազգին բարւոյն ծառայել է . երկրորդ քանի որ մեր դիտաւորութիւնը անձնական զուարճութեան մը համար Ազգին հետեւելով՝ բահեմք աղաւթներով մէկը մէկալը ծաղրել, և կամ Բաւլէ (պիւլլաճիւ) աղաւթներով Բիւլլեյնէ (թիւնաւորել) չէ, քանի որ մանապաշտութեամբ մոլեալ Հոգեւորականաց դէմ յանդիմանելով (ընդգէմ օրինաց) զանոնք համայն աշխարհի առջև հրապարակաւ խայտառակել ու պարծել, ու անով բարեկաշտ և հաւատացեալ Հայ ժողովրդեան մէջ դայթագողութիւններ պատճառել, ևս և երկրի վրայ կատարուած՝ Ամենակարողին հրաշալիքները անկար մարդկանց սեպհականելով մարմնաւորը հոգեւորէն վեր դասել, և կամ աշխարհի վրայ հոգեւորին ամեն բանի մէջ աւագունի ըլլալը ջրել չէ, որոնք անկրօնութեան և անհաւատի վայելուչ բաներ են . այլ մեր անկեղծ միտքը, մեր ընդունելութիւնը ու մեր ճանաչումը՝ « ՏՈՒՔ ԶԱՅՍՅԵՐՆ ԿԱՅՍԵՐ, ԵՒ ԶԱՍՏՈՒԾՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ » է . որն որ ճշմարիտ Քրիստոնէի և կատարեալ հաւատացեալի մը նախնական և անուրանալի պարտքն է : Ահա մեր դրութիւնը և ահա ամենայն արդարութեանց և ճշմարտութեանց հիւմը, որով մեր այս գործոյն մէջ պարունակուած և պարունակուելիք նիւթերուն ոգին էականապէս այս հիման վրայ պիտի ըլլայ, այսինքն ինչ որ կը վերաբերի Հոգեւորին և ինչ Մարմնաւորին (ըստ սահմանի Աստուածային Հեղեմակի) առանց այլայլելու զայն պիտի խօսիմք, ու անոնց յարմար պիտի վարուիմք, և շնորհիւ Ամենակալին երկրիս վրայ բան մը չի կրնայ պիտի այս ճշմարիտ դրութենէ մեզ դարձուել :

Եւ արդ ուրեմն քանի որ այս է մեր զրու-
թիւնը, ահա այսուհետեւ դէմերնիս ելած բո-
լոր անձնական բժախնդրութիւնը ոչինչ համա-
րելով միայն Ազգի և Արօնի վնասակար տես-
նուած բաներուն դէմ պիտի պատասխանեմք
կամ տրամաբանեմք, և այս ալ մեր նուիրական
պարտքն է . . . :

Հուսկ յետոյ՝ եթէ մեր այս ազգանպաստ
փոքրիկ ծառայութեանը մէջէն կրնամք Ազգիս
մէկ կրտսեր անհատի մը համար օգուտ քաղել,
ահա մեր գործոյն հասնելը վախճանը և մեր
լիովին ուրախութիւնը, և ահա մեր խոշնառա-
նաց փոխարէն փախազած ամենամեծ վարձքը .
Իսկ եթէ այս ալ չի տեսնեմք, դարձեալ ինքե-
րոյ սա ուրախական միւլթարութիւնը պիտի
ունենամք՝ որ Ազգին պզտի մէկ անդամը ըլլա-

լովնիս՝ մեր կողմէն առ Ազգն և առ Հայրենիս
ունեցած անհրաժարելի պարտաւորութիւննիս
այս կերպով կատարած կ'ըլլամք :

Ա.Օ.Դ

Արևելեանիս այս Շջանը ըստ նոր կարգադ-
րութեան Յունուար 10էն սկսեալ ժամանակո-
վը ելլեն հարկ էր նէ ալ դժբաղդաբար քանի
մը բանաւոր պատճառներէ արգելուելով ցարդ
ուշացաւ . ուստի յուսալի է թէ մինչև փետր-
ուարի վերջը պարտք եղած թիւերը հետզհետեւ
ամբողջ հրատարակուելով՝ յայնմ հետէ հաս-
տատուր կարգին պիտի յարստուէ :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿՐԾՆԱԿԱՆ ԽԱՌՆ ԴԵՊՔ ՄԸ

Ժամանակէ մը ՚ի վեր ազգին մէջ յուզմունք
մը տիրած է, դժբաղդաբար ծագած աննշան
դէպքի մը պատճառաւ . Հասարակութեան մե-
ջէն ոմանք այս դէպքը, և այս դէպքէն առաջ
եկած յուզմունքին երևոյթը ցաւալի հետևանք-
ներու ենթակայ եղած բան մը կը համարին . որ
ըստ մեզ ամենաոչինչ դէպք մըն է ծագած դէպ-
քը, և անտեղի յուզմունք մըն է տիրած յուզ-
մունքը :

Վսննէին իրարանցումի բան չի կայ, ոչ ե-
ղածէն և ոչ ըլլալիքէն . ոչ հետեանք և ոչ եր-
կիւղ մը կայ բանին մէջ, քանի որ եղածը աշ-
խարհի դժնդակ ընթացքին և մարդկային կե-
նակցութեան մէջ ցաւալի կերպով եղած և ըլ-
լալու բան մի է . քանի որ մեր մեղքերէն և մեր
պակասութիւններէն պատճառելով՝ այսպիսի
դէպքեր բոլոր տիեզերաց մէջ դրեթէ ամեն օր,
կրնամք ըսել ամեն վայրիեան պատահեր և կը
պատահին . քանի որ այս դէպքը այս օրուան
օրս օտար ազգաց մէջ ծագած բիւրաւորւստա-
կալի դէպքերուն հետ համեմատաբար չնչին ու
թեթիւ բան մը կը համարուի, քիչ մը աւելի բա-
ցայտ ըսելով՝ քանի որ սա յետին ժամանակ-
ներս աշխարհի ընդհանուր մարդկանց սեռին
մէջ կերպիւ մը արդարութիւնը անիրաւութեան
զոհ եղած, ճշմարտութիւնը ստութեան փո-
խարինուած, սերը ատելութեան, խոհեմու-

թիւնը անխոհեմութեան, հեզութիւնը բար-
կութեան, գթութիւնը անգթութեան, խո-
նարհութիւնը հպարտութեան, ներողութիւնը
անողորմութեան, մարդկութիւնը վայրենիու-
թեան փոխուած, ասոնցմով ամեն բան իրենց
սահմանէն դուրս չեղած՝ Հաւատք, Օրէնք,
Ազգ, Իրաւունք, պատիւ չի նայուելով ոտից
տակ կ'արհամարուին, և այս բաները միայն մարդ-
կային անձնական չար կիրքերու սեպհականուե-
լով այսպիսի դէպքերու մէջ ՚ի գործ կը դրուին . . .
Եւ արդ ահա՝ քանի որ այս ընդդէմ Մատուա-
ծային և Բնական օրինաց գեշութիւնները այս
դարուս մէջ փոխանակ անհետանալուն՝ առա-
ւել ևս խուճ մը ԼՈՒՍՆՈՐԵԱՆ մարդ-
կանց առջին իբրև օրինաւոր և երաւոյ վարմունք
մը համարուած են՝ զարմանք չէ որ մեր Ազգին
մէջն ալ այսպիսի դէպք մը պատահած ժամա-
նակ նոյն սերունդէն առաջ եկած Պօլեյի Լա-
սարգիսն Հայերն, մանաւանդ Պօլեյի Մատա-
կական Հայերն ալ զայն իրենց քմացը յարմար
անխնայ մեծցրնեն, դատեն, դատապարտեն ու
վճռեն, և այնպէս իրենց չար կիրքը յագեցրնե-
լու համար հրապարակաւ գրութիւններու ձեռք
դարնեն, երբեմն օրագրաց միջոցաւ և երբեմն
Յայտարարութիւններ հրատարակելով բարե-
միտ հասարակութեան մարքերը պղտորելով՝ զա-
նոնք զայրացրնեն :

Ահա եղածը և ըլլալները :

Ահա սակայն յայտնի գիտեմք որ այնպիսիները մեր այս ըսածներուն վրայ ալ սաստիկ պիտի բարկանան , ու իրենց կատարել կիրքերը պիտի նորանոր բռնկին մեր անձին դէմ , այնքան որ եթէ կարելի ըլլայ մեզ և մեր այս գործը իրենց չար կրիյը անիրաւաբար զոհեն . ինչո՞ւ . վասն զի ճշմարտութիւն խօսեցանք , արդարութիւն քարոզեցինք , որոնք՝ իրենց անհաշտ թշնամիներն են . որոնք՝ իրենց ներկայ դրութեանը դէմ կը զինին . որոնք՝ իրենց անհաշտութեանը կը խաւարեն . որոնք՝ իրենց նոր օրէնքը կանարգեն . որոնք՝ աւագոյ վրայ շինուած շէնքերնին հիմնայատակ ընելու կ'սպառնան . որոնք՝ կանուխ կամ անագան իրենց կամապաշտութիւնները պիտի խայտառակեն Ահա ասոնց համար է որ պիտի չափազանց բորբոքին ու դժկամակին՝ թէ այս և թէ այսուհետեւ ըսելիքներնուս վրայ . բայց ամենևին մեր փոյթը չէ , թող ինչ որ կը կամին զայն ձեռքէ չի թողուն , վասն զի Արեւելեանը իւր նպատակին համեմատ չի կրնար անտարբեր կենալ այս բաներուն մէջ , չի կրնար խոնարհիլ այնպիսի անիրաւութեանց առջին . չի կրնար իւր խղճին դէմ ու և իցէ գէշութեանց դիմաց խուլ , կոյր , համբ կենալ , մանաւանդ այն կերպ իրութեանց՝ որոնք Ազգին մեծ մասին բարոյականին կը վնասեն , Ազգութիւնը կը նուաստեցնեն , կրօնքը կ'աղտեղեն , աղնուականաց յարգը կ'ոչնչացնեն , պաշտօնատեսարց ըստ օրինի իշխանական զօրութիւնը կը տկարացնեն , ևս առաւել մեր հոգւոյ փրկութեանը միջնորդ և առաջնորդ կարգուած Հոգեւորականաց պատիւը իսկ և իսկ արհամարուելուն առիթ կը լան Ահաւասիկ Արեւելեան Դարը այս բաները ժամանակէ մը հետէ 'ի հեռուստ և 'ի մօտոյ համբերութեամբ և սրտի ցաւք կը դիտէ ու կը վնէ : Բայց այժմ ալ չի կրնայ պիտի լուկենալ՝ քանի որ վերոյիշեալ Ազգային և Արեւելեան խառն դէպքը առաջ գալով իւր օրինաւոր սահմանէն դուրս պօռթկած , և այս օրերս աւելի զայրանալով պարզամիտ Հայ ժողովոյեան սիրտը վշտանալուն ու կերպիւ մը անոնց դայթակողութիւնը պատճառ տուաւ , և դեռ կը շարունակէ : Այո . . . բայց անգամ մը դիտենք ու նայինք թէ՛ ի՞նչ է եղեր սա ծագած աննշան դէպքը , որ Հայ հասարակութիւնը զայրացնելու չափ բաւական յուզմունք պատճառեց : Ահա խումբ մը անձանք թանձանք

բերնէն ամեն տեղ սա խօսքերը կը լսեմք , այսինքն . — Անցի Պօղոս վարդապետը մարդասպան է , շնաբարոյ է , գող և աւաղակ է , մատնիչ է , բռնաւոր է , օրինազանց է , անօրէն է , ևս և բարբարոս է , է՛ , է՛ , է՛ : Այլ ջապէս աշխարհի վրայ որքան չարութիւնը կան յիշեալ Արդապետը բովանդակ 'ի գործ դրեր է Մեր կողմէն ալ այս Արդապետը ոչ մարդ , այլ հրեշ մը , ոչ բանական՝ այլ անբան կատաղի զազան մըն է ըսեմք , երբ լեզուն ոսկոր չունի :

Աստի այս մարդիկը այն աններելի յանցանքերը նոյն անձին վրայ ամուր մը հաստատելէն ետեւ , սոյն յանցանքներուն համեմատ հարկ եղած պատիժներն ալ կը վճռեն պօռններով թէ՛ — մեռցի՛ անօրէնն , սատակեցցի՛ եղեռնագործն , խայտառակեցցի՛ ոճրագործն , 'ի բանտս , 'ի տանջանս և 'ի դժոխս մատնեցցի՛ չարագործն այն — . Ո՛վ , Անցի Պօղոս Հայ վարդապետ . Իւր կարգով , վեղարով , մօրուքով , ձեռքի դաւազանով : Այո , հարկ ըլլայ շուռջառովն ու ուրարով : Ի՞նչ կ'ըսէք , ու ի՞նչ կը խորհիք ո՛վ անօրէններ , այս մարդը որբալոյս Միւռնիւ օծեալ է , քիչ մը համբերեցէք որ իւր ըրած չարագործութիւնները Ակեղեցւոյ Ղառաւորաց կողմէն անաչառ քննուին , ճշմարիտ վկաներով հաստատուին , ու այնպէս եթէ այն յանցանքներուն բոլորն ալ անոր վրայ ստուգուելով պատշաճ տեսնուի քաղաքական օրինաց համաձայն պատժուիլ նէ՛ թողէք որ յիշեալ դատաւորները նախ անոր վրայէն Պօղոսութիւնը առնուն , ու յետոյ Սողոմոնութիւնը ձեղի յանձնեն , այն ատեն ինչ որ կուգէք , ինչ որ կը կամիք բոլորն ալ կատարեցէք անոր վրան . չէ նէ զիտցած ըլլաք որ այն անիրաւ բայց օծեալ Սաւուղին գլուխը հատող մարդուն ինչ կերպ դատաստանին տակ կիյնաք և դուք : Չէ՛ կը պօռան , մենք օրէնք ունիմք պետք է որ մեր օրինաց համաձայն Պօղոս վարդապետը վեղարով , մօրուքով հրապարակաւ խայտառակուի Ո՛հ , ահա խորհուրդ սաղայելի : Եթէ այս բանը միայն խօսքով ըլլար՝ չի պիտի զարմանալինք այնքան , բայց երբոր այս խորհուրդնին դեկտեմբեր 31 թուականով Պօղոս Լեւոնի հետ Հայտարարութեամբ ելած հրապարակական թերթի մը մէջ տեսանք՝ ալ չի կրցանք մեր զարմանքը չափաւորել , ու մեր սրտերը վայրկի մը հանդարտեցնել : Բայց և այնպէս

Ո՛հ հուրու թեանս, զայս վատութիւնը

Ուստի ամօթ է ամօթ ո՛ր այլադէմէ՝ Պարոն-
ներ, պատկառեցէք քիչ մը, և խորհեցէք ան-
գամ մը թէ՛ ատեն մը աշխարհական մահապար-
տի մը գլխուն գլխարկը անպատուութիւն մը կը
րելուն համար ինչ բաներ դարձաւ . չէ՞ք գի-
տեր Եւրոպիոյ այն սովորութիւնը որ՝ մահուան
դատապարտուող մէկուն էն առաջ գլխէն խըւ-
խարկը առնելով՝ հասարակ գլխանոց (թաքեա)
մը կը դնեն, ի՞նչ կ'ըսէք ասոր, արդեօք Հա-
յու վարդապետի մը վեղարը անոնց գլխարկէն
ալ ցած բան մը համարուած է ձեր առջին .
Հռովմայու մէջ երբ Քահանայ մը՝ չէ թէ
մահուան այլ սոսկ բանտարկութեան դատա-
պարտուած ժամանակ՝ անոր ամենօրեայ զգեստ-
ներն անգամ փոխելով՝ և աշխարհականի զգեստ-
ներ հազցուցած՝ այնպէս առանց ի՛տես ժո-
ղովրդեան կը յուղարկեն իւր դատապարտու-
թեան տեղը . Եթէ Եւրոպիոյ դրութեանը յա-
րեալ էք, ահա ձեզի այս մասին հաղարէն մէկ
օրինակ Եւրոպացւոց սովորութիւն մը . իսկ և
թէ Հայոց, հայերը ոչ այսպիսի անդութիւն
և ոչ այսպիսի նախնի սովորութիւն մը ու-

նին, ընդհանրապես չափազանց ներողամիտ և աւանդապահ են . . .

Եյս բաները ըսելովն չի կարծէր ով 'ի չարիս վարանեալներ թէ՛ մեր նպատակը Պօղոս Արքապետին կողմնակցութիւն կամ պաշտպանութիւն ընել է, քաւ լիցի, ոչ երբէք . եւ թէ վերոյիշեալ սոսկալի յանցանքներուն տէրն է այդ մարդը՝ ոչ թէ միայն դուք այլ և հանդերձ ամենայն ազգովիմք կը բողոքեմք որի որ պետք է, և արդարապէս կուզեմք որ՝ «մեռցի այն անօրէնը, և չարաչար մեռցի այն անողորմ հրէշը» . բայց ոչ Պօղոսապէս, այլ Սօղոսապէս .

Եյո՛ւ ամեն վայրկեան պարտ է մեզի և ձեզի որ այս դատէն ձեռնթափ չելինիմք, քանի որ գործին մէջ յայտ և անյայտ Եղբի և Արօնի վնաս գէշութիւններ կը նշմարուին, բայց և այնպէս քանի որ յանցաւորը (դժբաղդաբար ըսեմք) օծեալ վարդապետ մը գտնուելով Եկեղեցւոյ դատաւորաց ձեռքն ու տակաւին անոնց քննութեանը ներքեւ է, այս միջոցիս առանց անոնց վերջի որոշմանը սպասելու զայն յափշտակելն ու մեր դատաստանովը դատելը Եկեղեցւոյ գէմ մեծ անօրէնութիւն մը, և ասոր հետ մէկ տեղ յիշեալ դատաւորները այս խնդիրը անիրաւ վճռեցին, կողմնակցութիւն ըրին, և կամ յանցաւորը գիտնալով փախուցին ըսելներով զանոնք ասդին անդին պարտաւելն ալ՝ այժմիկ յանիրաւի դատողութիւն մը, անստոյգ և կարծեօք գըտում մը կերեւի մեզի, ձեզի ի՞նչպէս՝ ո՞վ եւ ի՞նչ նուազինական Հայեր .

Ներեցէք փոքր մի մեզի ո՛ւ անծանօթ մարդիկներ, եթէ որ ձեր ըսածներուն վրայ չափելով այս Չինական նորահնար բառը ձեզի ծանր գալով կուզէք Եւստորական ածականը նորէն ստանալ նէ՛ պետք է որ շտապաւ ճանչնաք ձեր (մարդկօրէն) սխալմունքը, և առանց տրնտրնալու ետ դառնաք ձեր այս անեղանելի ճամբէն որ տանի 'ի կորուստ .


Եղէ՛ աճապարեցէք ժամ մը առաջ յետս կուշելու ձեր այն վատ ու գայթակղելի գրութիւնը, կամ առանձին Յայտարարութեամբ և կամ Սասիա Լուսաւորչական Հայ Լրագրոյն միջոցաւ, եթէ իրաւի Պօլսեցի էք, եթէ Լուսաւորչական էք, և եթէ Հայ էք, բայց չէ, մեր այս ցաւակցաբար ըսածներնիս բողոքովն արհամարհելով՝ դարձեալ ձեր կամապաշտութիւններուն պիտի հետեւիք եղբր, անալ դուք գիտէք, — արիւն ձեր 'ի գլուխ եղեցի —, սա

կայն սա յայտնի գիտնաք թէ՛ քանի որ ձերին այդ եռապատիկ նդովեց արժանի գրութիւնը կայ և պիտի կենայ Հայ հասարակութեան մէջ թէ Պօլսեցի և թէ անպօլսեցի ճշմարիտ Լուսաւորչական Հայերուն ոչ Եկեղեցական և ոչ աշխարհական մասը զձեզ իրենց զաւակ կամ եղբայր՝ ևս և սերունդ կրնան պիտի ճանչնալ . Ուստի կամ բողոքովն հեռացէք Եղբէն՝ խօսքով ընդունած այդ անունը ձեր վրայէն թօթ վելով, կամ սիրով մօտեցէք անոր՝ նոյն անուն համեմատ գործ տեսնելով . կամ թէ կարելի է բան խորհիլ և ուղիղ դատել չէք գիտերնէ, դոնէ ձայներնիդ վար քաշեցէք, խորով Եղբր՝ քիչ մըն ալ հանգչի ձեր ձանձրանալի վայնասուններէն, և խեղճ ու բարեմիտ Հասարակութիւնը իզայ թակղելէն .

Մենք իբրև օրագրի մը խմբագիր՝ մեզի հարկ եղածին չափ այսքան խօսք ընելէ՛ յետոյ՝ աղերս սանօք կը խնդրեմք Եղբայրն Արօնական Յարգելի Ժողովէն որ՝ ու իցէ կերպիւ պետք եղած միջոցները ձեռք առած, օր մը առաջ սա զգուշել և գայթակղեցուցիչ խնդրոյն վերջի որոշում մը վճռելով բազմայուզեալ անձանց սրտերը հանդարտեցնէ, վասն զի գրեթէ ամեն օր Հայ հասարակութեան մէջ այս բանիս վրայօք իրաւի և յանիրաւի անթիւ զրոյցներ, սոսկալի վիճաբանութիւններ, որոնց մէջ յայտնի է թէ բարկութիւն, ատելութիւն, հայհոյութիւն, անէծք պակաս չեն ըլլար .

Ուստի ո՛ւ Յարգելի Ժողով և Ժողովականք, դուք որ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հովիւներ ըլլալով, նոյն Եկեղեցւոյ հօտին մէկ մասը սիրով հովուելու, և զանոնք խաղաղ վիճակի մէջ պահելու կոչեալ էք, ուրեմն փութապէս ջանացէք այս և ասոր նման դժբաղդաբար ցանուած չար որոմները Հայոց խրտին մէջէն խլելու, և կամ Հայ ոչխարաց մէջ անզգուշութեամբ մը տած ապականիչ և պառակտող գայլերը մէջ տեղէն հալածելու . որպէս զի գոնէ բարցապէս խաղաղի ու հանդարտի՝ Ս . Լուսաւորչաց հետէ ձեզի պատանդ յանձնուած բովանդակ Հայ Ժողովուրդը .

Յիշաւի մեզի չինար այս խօսքերը ձեզի ըսելու՝ քանի որ դուք ինքնին գիտէք ինչ որ պիտոյ է ձեզի ընելու, բայց և այնպէս այս միջոցիս այսքանալ չըսեմք՝ ալ իրաւցնէ քարերը պիտի աղաղակեն .



Սուրբ Երուսաղեմայ Պատրիարք Էմենատիւ Տ. Յովհաննէս Ա. Արքեպիսկոպոսին անակրնկալ մահուան բօթալուրը Պօլիս հասնելով՝ համայն Եզդին սրտին չափազանց կսկիծ մը պատճառեց, այնպիսի երևելի անհատ մը կորսնցնելուն համար:

Յուսամբ թէ Եզդին այս ծանրաբեկեալ սրտին կսկիծը պիտի մեղմանայ յիշեալ վախճանելոյն տեղը արժանաւոր Անձ մը ընտրուելով:

Տարակոյս չի կայ որ այնպիսի երևելի Եթովի մը վրայ Պատրիարք ընտրուողը ըստ ինքեան պէտք է ըլլայ արդեամբ Եստուածասէր, Միաբանասէր, Եզդասէր, Աշխատասէր և Հեզահօգի մէկ մը. դարձեալ ըլլայ Եթովին ու Եզդին ճշմարիտ օգտին ջանացող ու նուիրուող, պայծառութեանը հոգ տանող և վերջապէս անոնց փառացը ու պատուոյն համեմատ վարուող Արքեպիսկոպոսին Անձ մը: Այսին զի Եզդն ու Անքը իրենց մէջ հաւասարապէս պատիւ ունին. ուստի Անքին պատիւը Եզդին, Եզդին պատիւը Անքին. Անք ու Եզդ մի և նոյն բանը ընել է, զանազանութիւնը միայն Երկրի հեռաւորութեան և մէջնալ կերպիւ մը իւրեանց սեպհականեալ իրաւանց վրայ է. ան ալ եթէ չեմք սխալիր՝ սա տրամադրութեամբ թէ՛ ըստ պահանջման պարագայից Եզդը, Անքին, Անքը Եզդին բարեխառութեանն ու պատուոյն պաշտպանութեան մը համար փոխադարձաբար մէկ մէկու իրենց իրաւանց մասերը պիտի դնեն առանց իրենց վնասուելու:

Արդ՝ ասոնք այսպէս զիտնալով այժմէն կը խնդրեմք ու Եզդասիրաբար կը պահանջեմք Եզդային Այրչուութենէ թէ՛ երբ որ որոշեալ ժամանակին Սահմանադրութեան համեմատ Պատրիարքի ընտրութեան համար Բնդհանուր Ժողով կը գումարուի, այս կէտերուս վրայ ուշի ուշոյ խորհուելով՝ յետ կատարման ընտրութեան նոյն ժողովոյն Յարգելի Ենդամները այն նոր ընտիր Պատրիարքին յանուն Երկնից՝ վերոյիշեալ Եստուածահաճոյ և Եզդին օգտակար գործերուն իսկ և իսկ սիրով և յօժարութեամբ յանձնառու ըլլալուն երգմամբ հաստատել տան:

Տար Եստուած որ Երևելեանիս Տրդ Թուոյն մէջ Երուսաղեմայ Անքին ներկայ վիճակին վրայօք ըրած մեր ցաւալի կասկածները փարատելին ու անհետանային՝ ընտրուելիք նոր Պատրիարքին շնորհիւ հոն ամեն կերպիւ օգտակար կարգադրութիւններ հաստատուելով:

— Հանդուցեալ լուսահօգի ճանիկ Եմիրայի Աղնուաղարմ ընտանիքը այս օրերս ցաւալի կորուստ մը ևս ունեցաւ, որ բաւական ցաւ պատճառեց բոլոր գերդաստանին. Եղած կուրծսն է՝ վախճանեալ Աիւլապեան Սարգիս աղայի դուստր, և յիշեալ ճանիկ Եմիրայի որդի Մեծապատիւ Մովսէս աղայի կողակից բարեպաշտօն և աղնուասիրտ Տիրուհի Տիկնոջ առ Եստուած փոխելը, որ երկու տարիէ ՚ի վեր դժբաղդաբար սրտի հիւանդութեան մը ենթակայ եղած՝ վերջապէս չի կրնալով մարդկային հնարքներէն օգուտ մը դնել, Յուլուար 20 ուրբաթ երեկոյին ժամը 10ին առնենները իւր կենաց սահմանաւոր ընթացքը վճարեց ՚ի մէջ 46 ամաց, թողնելով իր սիրելի յամուսնոյն երկու արու և երկու եգ զաւակ, թողնելով և զանոնք ՚ի մէջ սգոյ և ՚ի մէջ տրտմութեան:

Հետեւեալ օրը որ է շաբաթ, յուրարկաւորութեան հանդէսը կատարեցաւ ՚ի Միջազիւղ ժամը 8ին, որուն ներկայ էին՝ Սոյ միաբան Գեղապատիւ Տ. Յակոբ Ապիսկոպոսը, Երուսաղեմայ և Պօլսոյ Պատրիարքաց Երթանապատիւ փոխանորդները, և այլ Յարգելի Այրդապետք և բազում Բահանայք:

* Էմենատիւ Արքեպիսկոպոսին Պատրիարք Հայրը անձնական տեղորոշութեան պատճառաւ չէր կրցեր գալ այս հանդիսին, որուն հրաւիրեալ էր:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼ՝Ք

Եսկէ քանի մը ամիս առաջ Յոյն Պուլլաւաց ումանց՝ Յոյն Եկեղեցականաց կողմէն յիշաւի և անիրաւի կրած նեղութիւններէն դժտելով Հռովմայ Եկեղեցւոյն ծոցը վերադառնալ նին առ հասարակ ամենեցուն յայտնի է:

Եւ դարձեալ յայտ է թէ այս դարձը և կամ այս փոփոխութիւնը Յոյն Եկեղեցականաց սրտին մէջ արդէն արծարծեալ կրօնամոլութեան ոգին՝ նորանոր արծարծելուն, և անով իրենց ուրիշ Քրիստոնեայ Եզգաց Եկեղեցիներուն դէմ ունեցած ատելութիւնը սաստկապէս բորբոքելուն որքան առիթ եղև: Ինչպէս որ այս օրերս Յունաց Պատրիարքին յիշեալ դէպքը պատճառ առնելով ընդդէմ Սթամբուլի Եկեղեցականաց՝ ուղղակի Հռովմայ և անուղղակի կերպիւ այլ և այլ ուղղափառ Եզգաց օրինաւոր Եկեղեցեացը և անոնց Հոգեւոր և պաշտամունքներուն դէմ լի ատելութեամբ դրած և հրապարակաւ հրատարակած Շրջաբերականն (ըստ մեզ հայհոյարան) ալ մեր այս ըսածը ամենայն կերպիւ կը հաստատէ:

Ուստի այս անգամ մեր բարեմիտ ընթերցողները կը հրաւիրեմք յիշեալ շրջաբերականին այն կտորները դիտողութեամբ և զարմացմամբ կարդալու, զոր Մասիս պատուական լրագիրն՝ Մայրաքաղաքիս Գաղղիէրէն «Քուռիէ տ'Օռիան» Լրագրէն քաղելով հրատարակած է ՚ի տեղեկութիւն և ՚ի զարմացումն Հայ հասարակութեան. և մենք ալ մեր կողմէն դալ թերթերնուս մէջ անոր վրայօք մեզի հարկ եղած խորհրդածութիւնները պիտի կատարեմք:

— Մեղու Հանդէսը 121 թուով Նոր Տարուոյ շնորհաւորութեան առթիւը երկար Յօդուած մը հրատարակած ըլլալով՝ նոյն Յօդուածը Հայ հասարակութեան ոմանց զարմանքը չափազանց գրաւած է:

Միակերպ մեղադրելով զՄեղուն կրսն թէ՛ յիշեալ Յօդուածին մէջ տեղ տեղ հաւատոյ մասանց վրայ արտասովոր սխալմունքներու դարձուածքներ կը տեսնուին, և ընդհանրապէս Հայ Եկեղեցականաց դէմ անիրաւ և ընդդէմ օրինաց հայթայթմանքներ կան —:

Ուստի մենք ալ առիւնք Մեղուն այն թիւ

ւր և ուշադրութեամբ կարդացինք Յօդուածը, և տեսանք որ իրաւքնէ ոչ թէ անոնց ըսածին պէս սխալմունք՝ այլ Մեղուն 1861 Նոր Տարուոյն սկիզբը Նոր աշխարհի կ'ստեղծէ, մեր կոխած ու տեսած այս Եշխարհէն զատ. նոր կերպ Երեսնամեակ մը կը քարոզէ այն աշխարհի մարդկանց համեմատ. սա Երեսնամեակն է մը կը յօրինէ անոնց խելքին յարմար. նոր հիշատակներ կը կազմէ նոցունց ընթերցմանը համար, վերջապէս ինչ բան որ պէտք է այն աշխարհի և այն մարդկանց՝ Մեղուն իւր այն Յօդուածով կարգի դրած՝ Հայերն ալ կը հրաւիրէ այս նոր կազմութեան:

Ուրեմն Մեղուն ըսածը ոչ թէ սխալմունք մըն է՝ այլ իրեն և իրեններուն համար կատարեալ ուղղութիւն մըն է, կուզեն նէ Հայերն ալ ընդունին, և երթան Մեղուն ատեղծած նոր աշխարհ, և երկրպագութիւն ընեն անոր քարոզած նոր Երեսնամեակին, ունկնդիր քլան նոր Երեսնամեակին ու այս անօրինակ հեղինակութեանցը՝ եթէ ոչ ամենեւին թող չի զայրանան այնպիսիները, որոնք այս գրութեանէ զայլ թակուեր էին. թող չի բամբասեն Մեղուն և անոր այլ և այլ ըսածները՝ որոնք այն խօսքերը ուղղակի իրենց համար զրուցուած բան մը կարծեր էին:

Ուստի՝ այժմ իրենք այսքանով թող հանդուրտին, գալ անգամ Երեւելանը իւր խօսքերը պարզելով այս մասին հարկ եղածը ՚ի դործ կը դնէ:

Եյս օրերս Միջագիւղցի երկու Հայ պատանիներ որոնք եղբայր էին, գրեթէ միևնոյն ժամանակի մէջ զժնդակ և անակնունեի դեպքերու հանդիպած՝ երկուքն ալ քանի մը օրուան մէջ մահուան սուրին բերանը գոհ եղան. Յառաջիկայ թերթերնուս մէջ այս եղելութեան խկութիւնը պիտի բացատրուին, յօգուտ և ՚ի զգուշութիւն Հայ Երեսնամարդաց:

Խմբագիր-Տնօրէն

Մ. Գ. ՏԵՅԻՐՄԵՆՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐՈՔՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՊՈԼԻՍ, ՏԵՅԻՆՆԵՐԱՐ